



ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Քիֆիլիսով գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՏԵԼԵԳՐԱԿՐԱԲՈՒՄ № 253.

Դրամագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և օրհորհրդից)

3 այտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով.

3 այտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՏԵԼԵԳՐԱԿՐԱԲՈՒՄ № 253.

ՀԱՄԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՎԱՆԳՈՒԹՅԱՆ

Կարելի է գործել. Համակրութիւն հայերին.
Բէֆօրմները իրաւորութիւն են.— ՆԱԽԻՐԻՆ ՏԵՄԻՆԻ-
ՔԻՆԻՆ. Մի համակրելի ձեռնարկութիւն. Առա-
վանակի հանրային ջրերը. Նամակ Նոր-Բայա-
զէտից. Նամակ Բալթիանից. Նամակ Վալդի-
կովկասից. Նամակ խմբագրութեան. Ներքին
լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՄԻՆԻՆԻՆ. Կանգնողների
գանձաւոր. Արտաքին լուրեր.— ՀԱՆՈՒՄԻՆԻՆԻՆ.
ԲՈՐՈՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԻՆԻՆ. — ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Հայոց մամուլը Բալթիանիցում:

ԿԱՐԵԼԻ Ե ԳՈՐԾԵԼ.

«Մշակի» և տեղական միւս լրագրիւնների
մէջ ապոված դաւաճական թղթակցութիւն-
ները այս տարին մի առանձին ուշադրու-
թիւն են դարձում այն բանի վրա, որ
զիւզական ժողովուրդը մի յայտնի չափով
յամառութիւն և կասկած ցոյց տալուց
յետոյ սկսել է եւրօպական ձեռով բը-
ժկիկ խաղողի այգիները: Գիւղացին հա-
մոզվել է, որ օրկուսում, միլիոն, անտրա-
կնօղ և ուրիշ դրանց նման հիւանդու-
թիւնների դէմ պէտք է կուրել դրական
միջոցներով և որ չափազանց վատագու-
ն է բազմի բերմունքին թողնել այգիների
վիճակը, որոնց արդիւնքը յաճախ կաղմում
է նրա անտեսութեան նշանաւոր եկամուտը:

Այդ մոլորեցական երևոյթը արձանա-
դրվել է ոչ թէ միայն մի նաշանով, այլ
Անդրկովկասի զանազան մասերի մերթե-
րութեամբ: Թէ կախեթում, թէ Արաքսի ու
Կուրի աւազանների գիւղերում և թէ Կասպից
ու Սև ծովերի ափերի այգիներում, ամեն
տեղ, ամեն դաւաճում սկսվել է նոր եղա-
նակով բժշկութիւնը և գիւղացին սովոր-
ւում է թէ ինչպէս պէտք է դործածել
Բօրգոի հեղուկը, ինչպէս պէտք է փչել
ծծումը և այլն:

Գիւղացին չէ սիրում նորմութիւններ,
յամառութեամբ շարունակում է անանդա-

կանը և ընդունում, աշխատելով մի կերպ
մաքառել խոչընդոտները դէմ իրան ծանօթ
միջոցներով: Բայց երբ համոզվում է, որ
նրա անտեսութիւնը քայքայվում է և նրա
գիւղացած հնարները անգործ են պահպա-
նելու եղածը, նա դիմում է ուրիշների օգ-
նութեան: Որինակը, աճող փորձը այգիների
դէպքերում կատարում են վճռական դեր:
Իսկ երբ մի քանի համարձակ անձինք սկը-
սում են իրաւորել անտեսութեան նոր ե-
ղանակը, նրանց հետեւում են արագ կեր-
պով և միւսները: Որինակը վարակիչ կեր-
պով անցնում է անից տուն, դիւղից դիւղ,
գաւառից գաւառ և լայն ծաւալ է ստա-
նում:

ձիւղ է, մեր անտեսական կեանքի մէջ
չառ քիչ առաջադիմութիւն է եղած, շատ
սակաւ նորմութիւններ են ընդունված.
սակայն ո՞վ է այդպիսի մեղաւորը: Միթէ
միայն գիւղացին Միթէ միայն ժողովուր-
դը, որին ոչ ոք չէր սովորեցնում անտեսու-
թեան նոր ձևերը, ոչ ոք չէր ցոյց տալիս
այնպիսի օրինակներ, որոնց նա հետեւէր:

Գիւղացին ազէտ է, գիւղացին յամառ
է, գիւղացին կասկածով է վերաբերվում
դէպի ամեն մի նորութիւն. այդ ձիւղ է.
բայց ձիւղ է և այն, որ ոչ ոք սխտանա-
կան կերպով չէր մաքառում նրա սեփա-
թեան դէմ, չէր կատարում նրա յամառու-
թիւնը, չէր ջրում նրա կասկածը կենդանի
օրինակներով և չէր զննվաբարում նրան
անտեսական կեանքի զարգացումը ցուելի և
խոչընդոտները միջոցին ժողովուրդը պէտք
է համոզվի, որ նա ունի բարեկամներ և
իր համար անկեղծ հօգաջողներ: Երբ նա
այդ բանի մէջ կը համոզվի, նա ինքը կը
գնալի իր բարեկամներին ընդառաջ և կը
նպաստի օգտակար և արդիւնաւէտ դործի
աշնորթեան:

չառ տեղ նշանակել է, թէ թարգմանողը հա-
մառ մէկն է, և կամ երկու լեզուն մէկանց լա-
յը դիտել, որով ստիպվել է անկատու անմատ
բառերով պարբերութիւնները խնդել, ընթեր-
ցողին թողնել հասկալու կարելիութիւնը: Թերեւ
յարգող հրատարակիչն կարծում է, թէ երբ
նր և է գրութիւն ընթերցողին համար անմա-
սելի կը լինի, այն ատեն բարձր իմաստ կը
պարունակի, որով այդ նման ձանձարացիւ և
անձա՛հիւթիւ կը լեցնէ իր էջերն: Միջը չը
հանդիպեց տակալին մէկը, որ այս հրատարա-
կութիւնից գո՛հ մնար, որով շատ յոյսեր չու-
նար տեսակցանութեանը մասին:

«Իրաւունքը»,— կը հրատարակի վառնայում,
չաբաթը երկու անգամ, տարեգինն է 10/12
ֆրանկ: Առաջին տարին բոլորեց. հիւթեր են աղ-
գային և բաղադրական: Ձիւղ գրողարարութիւն մի
արած չէնք լինել, եթէ անհրաժեշտ է հրատարակ-
ված օրիցն մինչ այսօր ոչ ազգային և ոչ էլ
բաղադրական որոշ ուղղութեամբ մի չանկան
յօղում կարգաւոր բաղադրութիւնն ունե-
ցանք. կարծես թէ թիւրքաց ցէնդօրի թուղաւ-
թեամբ կը հրատարակվի: Իւր առաջնորդներն
այնքան տափակ և մեղկ են, որ լայկան երե-
կայի մի օրօրցին մօտ կարող է մարդ կարգա-
լիւր օրօր: Յարգելի խմբագիրը չը համարձակի
նշ օրի քննադատել (չէնց քիթն տակ պատող
օր ցերեկով գաղթականաց դրամներն չորթող,
կողպատող ազգասէր աղաներին և կուսակցու-
թեանց խաչադրողներին, և գաղթական հայ որ-
բերն դերմանացուց և միմյանարաց շահա-
գործող դաւաճան ազգայիններին) և կամ
կենդանութեան ունեցող ազգային ու և է
մի հարց յուրել, առ ահի թէ գուցէ իրան դէմ
վշտանան ու իւր թղթէ «Իրաւունք» անշահ
թերթը ետ դարձնեն: Այս թերթի երեք մասը

ՀԱՄԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԻՆ

«Մշակի» անցեալ համարում մենք հաղորդե-
ցինք, որ մայիսի 19-ին Լճի շրջանում կայացած
միջազգային ժողովում մի քանի նշանաւոր
գիտնականներ և քաղաքական գործիչներ ձա-
ռեր արտասանեցին Այստեղ առաջ ենք բե-
րում քաղաքականաբար այդ ձառերից մէկը:

«Պարոններ».

Այս դարի վերջամասին և քսաներորդի
արշաւային, մենք հասել ենք պատմութեան ա-
մենախառն և ամենահանդիսաւոր մասերին: Ե-
րևում է, որ չարութեան հանձարը կամենում է
այս օրով լիա բազմապատկել Հայաստանում ա-
մենաստեղծի ոճիրները, որոնք երբ և ից
պղծել են մարդկութեան տարեգրութիւնները:

«Ուրեմն մեզ բոլորիս, բոլոր ազգերի, բոլոր
ցեղերի և լեզուների քրիստոնեաներին է վայե-
լում այդ չարաբաստիկ ժամը դարձնել մի նոր
դարեկի շրջան, — խաղաղութեան, միութեան,
քրիստոնէական զիտարութեան դարեկը»:

«Այդ պատճառով, ես հնորհաւորում եմ Հա-
յաստանի բարեկամներին միջազգային ընկերու-
թիւնը այս ժողովի գումարման համար, յօգուտ
մի քրիստոնեայ ժողովուրդի, որ անարգար կեր-
պով դատաւարարվել է ջնջման մի մահմետա-
կան թաղաւորի կողմից, որին ձեր Մեծ Մարդը
մի այնպիսի անուան է տուել, որ յիշատեան
կապված կը մնայ այդ սովորների անուան հետ,
որի ոճրագործութիւնները պէտք է վաճառեն
նրան մարդկութեան շրջանից»:

«Այս պէտք է սասել բոլոր ազգերի երեսին,
չը նայելով մի քանի հակասական և չափա-
դիր տեղեկութիւններին, թէ հայ ազգը չարու-
նակ ջնջվում է ոչ թէ մեծ ընդհանուր կոտո-
րածներով, այլ ծածուկ կերպով ամենաազգային
տանջանքներով, որոնց նմանը պատմութիւնը
զեւ չէ արձանագրել իր էջերի մէջ»:

«Այժմ այլ ես խորթին չեն կոտորում դըժ-

բաղդ քրիստոնեաներին. թիւրքերը հասկացել
են, որ Եւրօպան արդէն սկսել է յուզվել այդ
կոտորածներից և փոխել են իրանց տակալկան
նրանք կազմակերպել են այժմ ամբողջ հայ
ազգի ջնջումը ծածուկ կերպով, այնպէս որ
Եւրօպան չը կարողանայ չառ յուզվել:

ԲԵՓՈՐՄՆԵՐ ԻՐԱՂՈՐԾՆԵՐ

Կ. Պօլսի թիւրքաց և հայոց լրագրիւնները մի ա-
ռանձին եռանդով և ոգևորութեամբ աւետում
են, որ թիւրքան արդէն վերջնականապէս եւ-
րօպականացել է և եւրօպական պետութիւննե-
րը այլ եւ ոչ մի առիթ չեն ունենայ միջամտել
օսմանեան կայսրութեան ներքին գործերի մէջ:
Տեղի է ունեցել մի վերին աստիճանի բարբար
և նշանաւոր պետական ակտ. լուսաւոր սուլ-
թան Աբդուլ-Համիդի հնորհիւ և հրամանով
Փոքր-Ասիայի հայաբնակ բոլոր վից նահանգնե-
րի մէջ արդէն ներմուծվել է դործադրվել են
բոլոր բէֆօրմները և 1895 թ. մայիսի 11-ին
մեծ պետութիւնների մշակած բէֆօրմների ծը-
բազրի բոլոր արամադրութիւնները, շատ ան-
շան բացառութեամբ, իրագործվել են: Ամեն
մի վիլայէթում կուսակալի օգնական է նշանակ-
ված մի քրիստոնեայ, կամ ինչպէս անուա-
նում են թիւրքերը, ոչ-իսլամ Գաւառների և
գաւառակների մէջ եւս քաղաքացիների օգնա-
կաններ են նշանակված ոչ-իսլամներ: Երբու-
մի, Դիարբէքլիի, Խարբէքլի, Բիթլիսի, Վանի
և Սըլվադի նահանգների մէջ թէ և ընդամենը
554 ոչ-իսլամ պաշտօնեաներ պէտք է լինէին,
բայց արդարադատ սուլթանը նկատելով, որ
միայն 225 հոգի են ընտրված, խիստ հրամաններ
է արձակել լրացնել որոշած թիւը: Ոստիկանու-
թեան կազմակերպութիւնը յիշեալ նահանգնե-
րում նոյնպէս ամբողջացրած է և նշանակված են
ոչ-իսլամ ոստիկաններ—Երզրում—նահանգում՝
57, Դիարբէքլում—66, Խարբէքլում—62, Բիթլ-

լիսում մի թերթ, նախատիւք երբեմնայ
հայ գաւառակներով: Պարոններն, գէթ ու-
րուականը ուղղակիոր այս նման զանաչներին
և հոգւոյ աղքատներին գաւառագրութիւն
դատաւստեան. չապրելուն փախաղող չենք, ուր
էր թէ ինքն էլ կոկիլուս յոյսեր ներշնչէր մեզ:

«Կատա կը»—մայիսի վերջերը սկսաւ կատակել.
չաբաթը երկու անգամ կը հրատարակվի, թեր-
թի գինն է առ այժմ 7 1/2 սանտիմ, խմբագիրը
կամ խմբագիրները են՝ Ս. Ֆէլէկան, Լեւոն
Մարդը և Տիւրք: Տարածութիւնը քիթ սրբելու
հաղիւ կը բաւէ պարունակութեամբ «Հայերից»
տարբեր, աւելի «Իրաւունքի» ձաքն լինելու նը-
մանութիւն բերէ յանձին. թերթերն լեզուաւ
սրախօսութիւններ, սրա մէջ էլ բաժին ունին:
Ձեռք կարող հասկանալ թէ յարգելի խմբագրու-
ներն ինչ նպատակաւ ձեռնարկած լինեն այդ-
օրինակ թուղթի թերթի երկույթով աղքատ պա-
րունակութեամբ և խեղճ իմաստով թերթի մի
հրատարակութեան, որը տնաղ կարող ենք հա-
մարել հայ մամուլին:

Անցեալներն բարեկամիցս մին ինձ իրաւամբ
նկատել էր այսպէս. «այս թերթերու ծնունդը
մեր մէջ հերձուածներու հոսանք մը կաղմնեց.
մեր թերթերն մեր ազգէն տարբեր կերպով կը
խորհին, և տարբեր կերպով կը խօսեն. իրենց
ընթերցողներն իրենց լեզուն չեն հասկնար,
իսկ անոնք ալ որ կը հասկնան՝ միայն կախու-
սան այդ խենդ ու խելառ. թերթերուն չորթը
զրոյթած դրամներուն վրա: Ահա տեսէք սա
պարզ հայեր. հայ գաղութը կը վճարէ «Իրա-
ւունքի» համար տարին 5000 ֆր., «Խաղաղի»
2000 ֆր., «Կատակի» 6—700 ֆր., «Հայերի»
1000 ֆր.: Մօտաւորապէս 9—10 հազար ֆրանկ
ազգէն կը կորցուի, և ազգը գրեթէ չօգտուի»:

Յունիսի ՉԿ-ին, Ախթադոզիկից Վլադիկավկազ վերադառնալիս՝ երկաթուղու շողեկառքում մեռաւ Ալէքսանդր Ստեփանեան Զալինեանց։ Նա Դուչէթ բաղաբի բնակիչ էր, բայց երկար տարինեւ ապրում էր Վլադիկավկազում։ Մինչև վերջին տարիները պարտաւում էր առեւտրական զանազան գործերով, բայց գլխաւորապէս մսի և կաշվի վաճառականութեամբ, որով վստասկել էր աճապին հարստութիւն։ Թէև առ այժմ հաստատ յայտնի չէ այդ հարստութեան իսկական չափը, բայց հաւանօրէն կարելի է ենթադրել, որ 200.000 ռուբլից աւել կը լինէր։ Ունեւնալով այդպիսի կարողութիւն, հանգուցեալը չէր ապրում աշխատէ, ինչպէս առ հարստաց հարուստները և քաղաքի մէջ այնքան յայտնի չէր իր բարեգործութիւններով։ Վերջին ժամանակներում նրան տանջում էր մի ինչ որ խորճիկական հիւանդութիւն, որից աղաւղիւտ համար այս տարի գնացել էր Վիէննա։ Այստեղից վերադառնալու ժամանակ Ախթադոզիկից Վլադիկավկազ, որի մանրամասնութիւնները հետեւեալն են։

1) Գուշկիւն զանազան անշարժ սեփականութիւնը, առանց ծախսելու իրաւունքի, կտակված է քաղաքին այն պայմանով, որ այդ կտակվածքի եկամուտը ծախսվի Գուշկիւն հայոց եկեղեցական-ծխական առանձնարանի աղքատ և աշխատաւոր աշակերտների ուսման և կրթութեան համար: 2) Վարդկիւն կազմի Սերգէնիւնայա փողոցում զանազան տան շարժական բոլոր կապեր կրտակված է հանգուցեալի կնոջ՝ Նատալիային: 3) Եւստիպիանովի ծախսել թէրէքեան նահանգում զանազան իր բոլոր անշարժ կառուածները (խանութներ, այգիներ, աղատ հողեր և այլն) և գոյացած գումարից 500-ական թուրքի տալ Գուշկիւն և Վարդկիւն կազմի հայ լուսաւորչական եկեղեցիներին այն պայմանով, որ յիշեալ եկեղեցիները ամեն տարի շարունակ ստանան ընծայած գումարի մի մասն սակաւ: Իր հոգին յիշատակելու համար: 4) մնացած գումարից պէտք է 5000 թուրքի գնել մի տուն, ուր հանգուցեալի կիներ պիտի ապրէ մինչև մահ: Բացի դրանից կարգադրված է մի այնպիսի գումար շահեցնել պետական գանձարանում, որից հանգուցեալի կիներ քանի կենդանի է կարողանայ ստանալ տարեկան 1200 թուրքի տոկոս իսկ տիկնոջ մահից յետոյ թէ այդ տունը և թէ գումարը պէտք է միացվեն ընդհանուր գումարից մնացածին հետ և ընծայվեն Գուշկիւն քաղաքին հետեւել պայմանով: շահեցնել այդ գումարը պետական բանկում և ստացած տոկոսը ծախսել Գուշկիւն և նրա գաւառի հայ լուսաւորչական աղքատ ուսանողների և ուսանողուհիների կրթութեան և ուսման վրա էջմիածին ձեռնարանում, Մոսկովայի լազարեան ձեռնարանում, Թիֆլիսի տղայաց և օրորաբաց գիմնազիաներում, Թիֆլիսի բէալական դպրոցում, Ալաշերական համալսարաններին բժշկական և իրաւագիտական բաժիններում, մի բարձրագոյն գիւղատնտեսական դպրոցում և Ուսման հողագործութեան և այգեգործական ուսումնարանում:

Ալեքսանդր Զայինեանի մարմինը յունիսի 26-ին Վարդկիւն կազմի տարան Գուշկիւն հողին յանձնելու: Հանգուցեալի կտակի մէջ խնդրել է, որ մարմինը թաղեն իր հօր գերեզմանի մօտ: Նա մեռաւ անգաւառ: Կտակագրութեան են՝ Ի. Տէրտէրեանից և Դրաբա Մամուկեանից:

Յ. Ռ.

ՆԱՄԱԿ ԽԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Լ. օնդ օն, յուլիսի 6-ին Արդէն յայտնի է հայ ընթերցող հասարակութեան, որ Բաֆֆիի անտիպ և սպառված երկերի պահանջը հետզհետեւ աւելի սաստկանում է, իսկ վաճառքի գրքերից գոյացած արդիւնքը, որը միակ միջոցն է նրանց հրատարակութեան, չէ կարողանում ծածկել սպառութեան ծախսերը:

Միանգամայն ինձ վրա ծանրացած լինելով այդ պահանջին բաւարարութիւն տալու հոգսը, վճուցի ձեռնարկել նրանց սպառութեանը, զիմելով բաժանորդագրութեան: Առ այժմ ձեռնարկելու և Բաֆֆիի զիմաւոր աշխատութիւններից երեք սպառված գրքերի սպաքութեանը: 1) «Սամուէլ», I, II, III հատորները մի գրքի մէջ ամփոփված: 2) «Կաթիլ-թէղ» I, II, III հատորները՝ վերջնական: 3) «Կայծեր», Հ. II. 1-ի տիպատաւ: Երեք գրքերի բաժանորդագրելին է միասին, մինչև սեպտեմբերի 1-ը, 6 թուրքի: Լոյս տեսնելուց յետոյ կարծեման 10 թ. 50 կ: Լոյս տեսնելուց յետոյ՝ 3 թ. 50 կ:

Վերադառնալով գրքերի հրատարակութեանը լինելու է Եւրօպայում, ամենաքանի կերպով և հեղինակի վերջին պատկերով: Յանկա-ցողները կարող են օգտվել վերադառնալով պայմաններից մինչև սեպտեմբերի 1-ը, որով թէ հեղինակի այդ երեք մեծագործ աշխատութիւնները զիւրաւարտելի կը լինեն, անաւանդ իրանց համար, որոնք ցանկանում են սենսալ Բաֆֆիի գրաւորները, բայց միջոց չունեն վերադառնալու: Հաջիքներ: Ասում են, որ նահանգի վարչական պաշտօնեաների մէջ հիմնովին փոփոխութիւններ են լինելու:

Յանկապողները կարող են զիմել սեպտեմբերի 1-ը մինչև օգոստոսի 1-ը: Բաֆֆիի վաճառքի գրքերի համար հետեւել հասցեյի, A. Раффі, Тифлисе. Իսկ արտասահմանի համար՝ Mrs Anna Raffi. 26 Loftus Road, Uxbridge Road, London W.

Այլի Անան Բաֆֆի

ՆԵՐՈՒՆ ԼՈՒՐՆԵՐ

Երէկ, յուլիսի 2-ին, Ռուսաստանի մի ընդարձակ մասում, այն է Սիբիրում սկիզբ դրվեց հատաստանական բէֆօրմներին: Ալեքսանդր II կայսրի հրատարակած օրէնքագրութեան բարեփոխումը պէտք է այսուհետեւ տիրուին և այն երկրներում, որ մինչև այժմ ճանաչվել է իբրեւ աքսորատեղի և միայն վերջին տարիներս դարձել է իր վրա բոլորի ուշադրութիւնը իր հարստութեամբ և գաղթականութեան համար ունեցած ընդարձակ տարածութիւններով: Առաջիկայ երկու երեք տարվայ ընթացքում յոյս կայ դատաստանական բէֆօրմները մտցնել Ռուսաստանի բոլոր մասերում, այնպէս որ բնակչոցը դարձի սկզբնաւորութեան օրը ամեն տեղ հաստատված կը լինեն դատաստանական նոր կարգեր:

Վանից մեզ գրում են. «Մոսկովայի քաղաքը, որ տարածված է Բաղէշի, Սասունի և Կիար-բէքերի մէջտեղ ընդարձակ դաշտագոտի մէջ, ապագամբել են մէկ ու կէս ամիսէ ի վեր և սպանել են մէկ զայմագամ իր ծառաներով մէկտեղ, մէկ աղայ-բէշի 2 ձիւտերներով, երկու հարկաւորներ, չորս չաւուշ և հինգ հէփէր: Յարգ ոչ մի լուրջ միջոց ձեռք չէ առնված դանձոյր զսկզբու համար:»

Նոր հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ ֆիլոսոփերն երեւել է Ռաչի գաւառի Սամեք գիւղում, որը մի չարք գիւղերով բաժանված է Բաղի և Նախի գիւղերից, ուր վերջին անգամ անցեալ տարի նկատվել էր ֆիլոսոփերն: Այս փաստը ցոյց է տալիս, որ ֆիլոսոփերն իր շարժման ճանապարհին ոչ միայն չէ դադարում, այլ և անսպասելի թուրքներ է առնում:

Այս տարվայ մայիսի 10-ից կոնկաւտի Գա-հիլէ քաղաքում սկսել է հրատարակվել «Փարոս» անունով մի հայ թերթ, գրական և քաղաքական բովանդակութեամբ: Թերթը դուրս է գալիս յաճախ երկու անգամ և զինն է 25 ֆրանկ: Խմբագիրն է պ. Ալիփար, Կ. Պոլսի Ղարեբը և «Հայրենիք» նախկին թերթերի աշխատակիցներից մէկը:

Մեզ ուղարկված է Ֆրանսիայի Արկաշօն-Լէ-Բէն քաղաքից մի գրութիւն, որից երևում է, որ յուլիսի 3/15-ին կը բացվի Բարբոզի մի ժամ հեռաւորութեամբ զանազակ Արկաշօն քաղաքում առեւտրական, արդիւնաբերական, առողջապահական, սննդի և զեղարուեստական մի միջադաշին ցուցահանդէս: Ռուսաստանը մասնակցում է այդ ցուցահանդէսին, ուստի և ուստաց փաճառակները, արդիւնաբերողները և զեղարուեստագէտները կարող են մինչև օգոստոսի 1-ը իրանց յայտարարութիւններով զիմել կամ ուղարկել ցուցահանդէսի վարչութեան, այս հասցեով՝ Direction de l'Exposition a Arcachon-les-Bains (France) կամ Ռուսաստանի Ֆրանսական հիւպատոսներին:

ՀԱՅԻՒՆԻՆԻ տաւրից մեզ գրում են. «Յունիսի 25-ին, երեկոյեան ժամը 6-ին, Գանձակ ժամանեց և այնուհետ, առանց ճանդիստ առնելու, ճանապարհվեց դէպի Հայիքեւոյ ամարանոցը: Գանձակի նոր նահանգապետ զինեալ-մայր ի. Պ. Կիրէլի: Չը նայելով որ նա նախօրոք կարգադրել էր, որ պաշտօնեաներից ոչ ոք չը դիմաւորի իրան, երկաթուղու կայարանում ներկայացաւ քաղաքագլուխ Կոզմովիցիի քաղաքային վարչութեան 2 անդամներին հետ: Հետեւել օրը, 26-ին, նահանգապետը ընդունեց վարչական ծառայողներին, իսկ 29-ին դատարանական պաշտօնեաներին: Նոյն օրը ինքը նահանգապետը փոխպետգլուխներին արեց: Յունիսի 27-ին նահանգապետը գնաց Գանձակ և նոյն օրը երեկոյեան վերադարձաւ: Հաջիքներ: Ասում են, որ նահանգի վարչական պաշտօնեաների մէջ հիմնովին փոփոխութիւններ են լինելու:

ՆԵՐՈՒՆԻՆ մեզ գրում են. «Վերջին օրերում մի քանի անգամ անձրեւներ տեղացին, և չորերը բաւական թուլացան. ցանքերը սարահարթերում լաւ են, իսկ դաշտերում վատ: Այս տարի լաւ բերք է խոստանում բամբակի մշակութիւնը, իսկ դրանից մեծ կախում ունի Արարա-

տեան դաշտի ժողովրդի տնտեսական դրութիւնը: Այն գաղթականները, որոնք ձմեռը չը կարողացան Արարան անցնել և ստիպված մնացել էին Պարսկաստանի և Մակուի գիւղերում, այժմ շարունակ գալիս են ու գալիս, այնպէս որ այժմ այնտեղ բաւական թուով գաղթականներ կան:»

ԲԱՐՍՈՒՄ գիւղից մեզ գրում են. «Բարսում գիւղը Գանձակի նշանաւոր գիւղերից մէկը կա-րելի է համարել: Այս գիւղը երկու կողմից շրջապատված է ահագին լեռներով, որոնց միջով հոսում է Դաւթոյ գետը, Կուրի վտակ, որը ջրում է Բարսում գիւղի աղբիւնը և պարտէզները: Բայց, զիջադաբար, այժմ Դաւթոյ իր առաջվայ նշանակութիւնը չունի: Առաջ այս գետը, բացի բաղնիքից աղբիւնը ջրեւոյց, բաւական քանակութեամբ ձուլն էր մատակարարում մեր գիւղացիներին, բայց վերջերս, չնորհի, գերմանացի Սիմենսի պլանէ զօրծարանի, որը գտնվում է Գեղաբէկ կոչված աւանում, պլանէ զեղնադաշն ջուրը խառնվելով Դաւթոյի հետ՝ իր վտակը բաղնիքի մէջ բոլորովին սպառել է մեր գետի ձկնները, մինչև անգամ մեծ ձկաններ է պատճառել աղբիւններին և բանջարանոցներին, որովհետեւ մեր աղբիւնը այժմ չեն տալիս մեզ այն բերքերը և զինին, ինչ որ ստանում էինք, իսկ բանջարանոցները չեն տալիս բազրուհի: Համ ձմեռուին ու սեխը, որ տալիս էին անաշի: Մի քանի տարի է, ինչ որ արտաբերից պակաս բերք ենք ստանում, որովհետեւ երբեմն կարկան է սնչացնում արտերը և երբեմն էլ երաշտութիւնը: Բաւական չէ այս, անցեալ տարի մեծ ձեռք հասցրին մեր արտերին և միջերը, որոնք աւելի մեծ վտանգ են սպառնում այս տարի, եթէ դրանց առաջը չաւաղվի:»

ԼԱԳՈՒԵԼԻՆՅՈՒՄ մեզ հաղորդում են սպանութեան և առաքակութեան հետեւալ նոր դէպքերը: «Յունիսի 22-ին մարդասպանութեան մի դէպք պատահեց Բէլքեան գիւղից Զաքարիայ տանող ճանապարհի վրա, Դոնիկածի գիւղից մի վերստ հեռու: Գանձակեցի զինագործ Համբարձում Ղազարեանց իր ընտանիքով գնում էր Զաքարիայ, ճանապարհին Համբարձումը վաղ է իջնում սալից իր օրդու հետ թռչուններ որսալու, իսկ կինը սալի մէջ նստած իր մանր գաւառներով կամաց-կամաց առաջ են գնում: Յանկարծ անտուր միջոց, դարանաւու եղած երկու շարագործ թուրքեր արձակում են հրացանը և գնդակը զիւրեւում Համբարձումին, սպանում է նրան: Որդին տեսնելով հօր մահը, վախճում է մօր մօտ, իսկ չարագործները դուրս են գալիս անաւանից, կողոպտում են սպանվածին և անհետանում: Վարդապետներից մէկին արդէն կաշնաւորել են, իսկ միւսը անհետացել է: Յունիսի 24-ին հուլիսից մի երիտասարդ մեծ քանակութեամբ ցուրեն է բերում Զաքարիայ ծախելու. ցուրենը ծախում է, և մօտ 600 թ. ստանալով, միւս օրը ճանապարհվում է դէպի Նուսի: Ճանապարհին յանկարծ առաքակները յարձակվում են երիտասարդի վրա, կողոպտում են և խլում փողերը:»

ԲԱՐՍՈՒՄ գիւղից մեզ գրում են. «Վաղարշե-րը նորից երևան եկան մեր կողմերում: Մի քանի ժամանակ է, որ այստեղ երեք թուրք առաքակ են չըջնում: Այս օրերս մեր պրիտամը իր մի քանի մարդկանցով գնում է դրանց որոնելու և լուր տանելով գտնում է նրանց մի թուրքի վրանի մէջ: Բայց, զիբախտեալ, չեն կարողանում բռնել: Առաքակներից մէկը վերք է ստանում, բայց էլի կարողանում է փախչել իր ընկերների հետ, թողնելով մի քանի ձիեր գնդակահար:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԿԱՆԴԻԱՅԻՆԵՐԻ ԳԱՆՎԱՏԸ

Կանդիայի քրիստոնէայ բնակիչները այս օրերս լուրջ Սուրբիւրի մի հեռագիր ուղարկեցին, որի մէջ նրանք զանգատում են, թէ հեռուական գործերով գրաված ուրիշ քաղաքներում իրական միջոցներ ձեռք առնելուց դադարեցնելու անկարգութիւնները և ընդհարումները քրիստոնէաների և մահմեդականների մէջ: Միայն Կանդիան, որ կանգնած են քրիստոնե-

կան գործերը, ամենաողջալի գրութեան մէջ է գտնվում: Բաշիքուգուկները անկայանի կերպով կողոպտում են քրիստոնէաների աները և խա-նութիւնները և անգրիական օֆիցերների աչքի առ-ջև արչաւանքներ են կատարում քաղաքի չըջա-կաններում: Չը նայելով անգրիական զինուորա-կան կորդոնին, նրանք յարձակում են դործում գիւղերի վրա, կոտորում են բնակիչներին, ա-ւերում են կայքերը, իսկ քրիստոնէաները զերկ-ված են պաշտպանվելու: հարաւորութիւնից, որովհետեւ, պաշարման պատճառով, չեն թող տալիս որ պատերազմական միջոցներ հասցնեն նրանց: Փոխանակ վերջ զնեւալ աղբիւնի գրու-թեանը, անգրիական իշխանութիւնները մտա-դրութիւն ունեն մեծացնել զինուորական կորդոնը և այդպիսով աւելի լայն սալարեղ տալ քաշիքու-գուկներին՝ իրանց անօրէնութիւնները կատա-րելու համար: Վերջում Կանդիայի քրիստո-նէաները աղերսում են վերջ տալ այդպիսի ան-տանելի գրութեանը այն Քաղաքում, որ գտնու-վում է քրիստոնէական դրօշակի հովանաւորու-թեան տակ:»

«Times» լրագրի թղթակիցը կատարելապէս հաստատում է Կանդիայի քրիստոնէաների այդ զանգատների ճշմարտութիւնը: Ինչպէս յայտնի է, դեռ նորերս կանդիական բաշիքուգուկները, չը նայելով անգրիական զինուորական կորդոնին, քաղաքից դուրս գնացին և այրեցին Կանի-Կաս-տէլի գիւղը, որի ժամանակ սպանվեցին մօտ 20 քրիստոնէաներ: Քաղաք վերադառնալուց յետոյ քաշիքուգուկներին զինաթափ չարին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ներիտասարդ թիւրքերի կուսակցութեան գործունէութեան մասին «Politische Correspondenz» լրագիրը հետեւեալ տեղեկութիւններ է հաղորդում: Թիւրք ժողովրդի ցանկութիւնը, որ Թեսա-լիան մնաց Թիւրքիայի տիրապետութեան տակ, մեծ համակրութեամբ է ուղեւորվում և երիտասարդ թիւրքերի մամուլի կողմից: Բայց ամե-նամեծ եռանդով բողոքում են երիտասարդ թիւրքերը Տրիկալի թողնելու դէմ: Կուսակցու-թեան օրդան «Միզանը» գրում է. «Տրիկա-լան չէ կարելի երկրորդ անգամ տալ յոյներին այն պատճառով, որ այդ քաղաքի բնակիչները բացառապէս մահմեդականներ են, որ այդ բա-ղաքը Յունաստանի թողնելը անթիւ կը տալ Բալկանեան փոքր պետութիւններին կարծել, թէ Թիւրքիայի վրա միշտ կարելի է յար-ձակվել անաղտոյի և վերջապէս այն պատճառով, որ թիւրքաց զօրքը երկրորդ անգամ արին է թափել Տրիկալայի համար: Կուսակցութեան սպած բրօշիւրների թիւը շարունակ աճում է. այդ բրօշիւրները քարոզում են բէֆօրմների միջոցը և տարածվում են Թիւրքիայում: Սակայն Կ. Պոլսի զեկալարող չըջաններում զեռ չեն կօրցրել այդ շարժումը կանգնեցնելու յոյսը: Ահմէդ-Ջէլալեդին փաշա գեներալին, որ սուլ-թանի կաթնաղբիւնը է, յանձնարարված է հա-մօղել Մարաղ-բէշին զաղարկելու «Միզան» լրագրի հրատարակութիւնը: Բացի դրանից չու-տով Եւրօպա պէտք է ուղարկվի մի պատգամա-ւոր Եւրօպ-Քիտիցի, համալու: համար հայ կօ-միտէաներին՝ զաղարկեցնել իրանց գործունէու-թիւնը:»

—Հաղորդելով թիւրքաց զօրքերի զինուորելու-լուրը, «Մակեդոնիա» լրագիրը նկատում է. «Եւստ հաւանական է, որ Թիւրքիան նախաես-նում է ներքին յեղափոխութիւն, որը, ի հարկէ, հետեւն է հարստահարվածների ցանկութեան՝ բարեքել իրանց գրութիւնը: Եւ ահա Թիւրքիան պատրաստութիւններ է տեսնում ճնշել այդ շարժումը իր սաղի մէջ: Բայց Թիւրքիայի հա-շիւները սխալ են, այս անգամ նա կընդհարվի ոչ վտա զինուորած ամբախի հետ, ինչպէս որ այդ տեղի ունեցաւ հայկական շարժման ժամա-նակ: Ի դէմս Մակեդոնիայի սպառնալոված ժո-ղովուրդների նա կը հանդիպի զօրեղ հակաա-կորդի, որը արժանի է քաղաքական ազատու-թեան:»

—Ի. Գուշը նոր նոր պատրուկներ է հնա-րում խաղաղութեան բանակցութիւնները ձգձը-գելու համար: Օրինակ, «Times» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը խոսքով, զեպարան երի կոնֆլ-էնցիայի վերջին նիստը, Տէմիթի փաշայի առա-ջադրութեամբ, յետաձգվեց անորոշ ժամանակով:

Типографія Канцел. Главн.нач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.